ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. հոկտեմբերի 2-ից 6-ը Բանգկոկում (Թաիլանդի Թագավորություն)՝ բնապահպանության նախարար Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Էրիկ Գրիգորյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   Բնապահպանության նախարար

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Բանգկոկ (Թաիլանդի Թագավորություն)

   2018թ. հոկտեմբերի 2-ից 6-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

5. ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն (UNIDO)

   <u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>

6. Կայուն զարգացման 5-րդ կանաչ արդյունաբերական կոնֆերանսի բարձրաստիճան հատվածի հանդիպում

7. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

   Հանդիպման ընթացքում պանելային քննարկումներ անցկացվեցին հետևյալ հարցերի շուրջ.

- Ո՞ր ազգային քաղաքականությունները և ոլորտային ծրագրերն են հնարավորություն տալիս երկրներին նպաստավոր պայմաններ ստեղծել գոյություն ունեցող արդյունաբերությունները վերափոխելու և նոր կանաչ արդյունաբերության ոլորտները ստեղծելու համար:
- Ո՞ր քաղաքականությունն է նպաստել ռեսուրսների օգտագործման կրճատմանը՝ ստեղծելով նոր բիզնես հնարավորություններ:
- Ո՞րն է եղել հասարակական-մասնավոր գործընկերության դերը կանաչ արդյունաբերության զարգացման ոլորտում:

Հանդիպման ընթացքում յուրաքանչյուր երկիր ներկայացրեց առկա խնդիրներն, ինչպես նաև կայուն արդյունաբերականացման տարբեր ասպեկտների նորարարությունները և առաջադիմությունը, գործիքները, տեխնոլոգիաները, արտադրանքը և երկրի լավագույն փորձը: Նման գործողությունները նպաստում են կայուն զարգացմանն ուղղված նպատակների իրականացմանը, ինչպես նաև Կանաչ ներդրմանը:

Հանդիպման շրջանակներում ազգային կառավարությունների ներկայացուցիչները ներկայացրեցին իրենց երկրներում կանաչ արդյունաբերության զարգացման ներկայիս կարգավիճակը, բարելավման հնարավոր ուղիներն, ինչպես նաև կանաչ արդյունաբերության ոլորտի առկա խնդիրները:

Հանդիպման մասնակիցները կարևորեցին ազգային կոնտեքստում կանաչ արդյունաբերության զարգացմանը վերաբերող առանցքային կետերը՝ կենտրոնանալով հնարավորությունների և մարտահրավերների վրա:

8. ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Երկկողմ հանդիպում եմ ունեցել ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) գլխավոր քարտուղար Լի Յոնգի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին կայուն արդյունաբերականացման նորարարական մոտեցումները, հնարավոր միջոցները առկա խնդիրները հաղթահարելու համար, ինչպես նաև հետագա քայլերը, որոնք հարթակ կհանդիսանան անցմանը դեպի «կանաչ արդյունաբերություն»:

9. ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես նախորդ չորս հանդիպումներին, այս հանդիպմանը ևս համաժողովի մասնակիցների կողմից ընդունվեց համապասխան փաստաթուղթ, որը կտեղեկացնի Կանաչ Արդյունաբերության հետագա միջազգային պարտավորությունների մասին և լրացուցիչ խթան կհանդիսանան «Կանաչ արդյունաբերության» քաղաքականությանը, փորձին և արտադրանքին՝ զարգացող և անցումային տնտեսության համար՝ ամբողջ աշխարհում:

Անցումը դեպի կանաչ արդյունաբերություն հնարավոր է միայն օրինական պայմաններում: Ազգային կառավարությունների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականցվող քաղաքականությունը հիմնարար նշանակություն ունի տնտեսության զարգացման համար, որն իրականացվում է տնտեսական, սոցիալական և էկոլոգիապես կայուն ուղիների միջոցով: Կայուն զարգացման օրակարգ 2030-ի համատեքստում կառավարությունները խրախուսվում են, որոշ դեպքերում, պարտավորվում են ընդունել կանաչ արդյունաբերության քաղաքականության պրակտիկան, որը կարող է հանգեցնել ռեսուրսների արդյունավետության ավելացմանը, թափոնների նվազեցմանը և կանաչ արտադրանքին:

Պլաստիկ թափոնների և թափոնների էլեկտրոնային և էլեկտրական սարքավորումները խնդիրներ են, որոնք անհամաչափորեն ազդում են զարգացող և անցումային տնտեսությունների վրա: Այս նստաշրջանին քննարկվեց թափոնների տնտեսապես առողջ կառավարման և վերամշակման համար բարենպաստ պայմանների ստեղծման հարցը: Ներկայացվեց երկրների լավագույն փորձը վերոնշյալ խնդրի շուրջ, ինչպես նաև առաջարկություններ ներկայացվեցին կիրառելու այն ռազմավարություններն ու տեխնոլոգիաները, որոնք հասանելի են պլաստիկ և էլեկտրոնային թափոնների կայուն վերամշակման համար:

Invalid signature

X

Բնապահպանության նախարար

Signed by: Ekeng CJSC

Էրիկ Գրիգորյան